ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ---------- 2014թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 37/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Անդրանիկի փողոցի թիվ 37/1 հասցեում գտնվող 731.6 քմ մակերեսով տարածքը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 1392.46 քմ մակերեսով հողամասն (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 30.05.2011թ. հ.2768763 վկայական) անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2019 թվականի սեպտեմբերի 30-ը ժամկետով տրամադրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 37/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Անդրանիկի փողոցի հ.37/1 հասցեում գտնվող, Շահումյանի հարկային տեսչության կողմից նախկինում զբաղեցված տարածքը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը անհատույց օգտագործման իրավունքով նախարարությանը տրամադրելու խնդրանքով:

Անդրանիկի փողոցի հ.37/1 հասցեում գտնվող տարածքը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը, համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 30.05.2014թ. հ.2768763 վկայականի հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2013 թվականի կառուցվածքային փոփոխությունների հետևանքով Շահումյանի հարկային տեսչությունը վերակազմավորվել է և տեղափոխվել է այլ վարչական շենք, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը խնդրել է քննարկվող տարածքը տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 20-ի հ.166-Ն որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներքին անվտանգության վարչությանը:

Նկատի ունենալով, որ վարչական շենքում օգտագործման տարիների հիմնանորոգման աշխատանքներ չեն իրականացվել և ներկայումս այն ենթակա է կապիտալ վերանորոգման Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը հայտնել է իր պատրաստակամությունը շենքում իրականացնելու հիմնանորոգման աշխատանքներ, որոնց նախահաշվային արժեքը, ըստ նախնական խոշորացված հաշվարկների կկազմի 90 մլն ՀՀ դրամ:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներքին անվտանգության վարչության կողմից իրականացվող գործունեության կարևորությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պատրաստակամությունը շենքում հիմնանորոգման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ, ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Անդրանիկի փողոցի հ.37/1 հասցեում գտնվող 731.6քմ մակերեսով տարածքը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 1392.46քմ մակերեսով հողամասն անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2019 թվականի սեպտեմբերի 30-ը ժամկետով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը տրամադրելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 37/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Անդրանիկի փողոցի հ.37/1 հասցեում գտնվող տարածքը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 37/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Անդրանիկի փողոցի հ.37/1 հասցեում գտնվող տարածքը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ